Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1073-18.01.2011-ՏՀ-010/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է ազատ տնտեսական գոտիների ստեղծման, կազմակերպման և լուծարման ընթացքում ծագող իրավահարաբերությունները:

Հոդված 2. Ազատ տնտեսական գոտիների մասին օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական գոտիների մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, մաքսային և հարկային հարաբերությունները կարգավորող օրենքներից և այլ իրավական ակտերից:
2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա գործում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում կիրառվող հասկացություններ

1. Ազատ տնտեսական գոտի - սույն օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատուկ սահմանված տարածք է, որը համարվում է Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից դուրս գտնվող տարածք, որտեղ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված առանձնահատկություններին համապատասխան:
   Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են ստեղծվել տարբեր գործառնական տեսակների ազատ տնտեսական գոտիներ:
2. Ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ (այսուհետ Կազմակերպիչ) – բացառապես ազատ տնտեսական գոտու կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված (հիմնադրված) կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընտրված իրավաբանական անձ, որն ապահովում է ազատ տնտեսական գոտում գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը և ծառայությունների մատուցումը:
3. Ազատ տնտեսական գոտու շահագործող (այսուհետ շահագործող) – սույն օրենքին համապատասխան բացառապես ազատ տնտեսական գոտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ մասնաճյուղ, ինչպես նաև օտարերկրյա կազմակերպության ներկայացուցչություն, որը ունի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրված համապատասխան թույլտվություն և կազմակերպիչի հետ կնքված համապատասխան պայմանագիր:
4. Լիազոր մարմին - ազատ տնտեսական գոտիների պետական քաղաքականության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին:

Հոդված 4. Շահագործողների թույլտվության տրամադրումը և կազմակերպիչի ընտրությունը

1. Շահագործողների թույլտվության տրամադրումը և դադարեցումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից շահագործողի թույլտվությունը տրվում է շահագործողի կողմից ներկայացրած գործարար ծրագրի գնահատման արդյունքում:
3. Շահագործողի կողմից ներկայացրած գործարար ծրագրին ներկայացվող պահանջները և գնահատման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Շահագործողը թույլտվությամբ չսահմանված այլ տեսակի գործունեություն իրականացնելու համար պետք է ստանա լրացուցիչ թույլտվություն:
5. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան տրամադրված թույլտվությամբ սահմանված պահանջների խախտման կամ չկատարման դեպքում թույլատվությունը դադարեցվում է:
6. Կազմակերպչի ընտրության կարգը և չափանիշները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Հոդված 5. Ազատ տնտեսական գոտու ստեղծումը

1. Ազատ տնտեսական գոտին ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:
2. Ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետք է ներառի.
   1) ազատ տնտեսական գոտու ստեղծման նպատակը,
   2) տարածքի նկարագիրը և սահմանագիծը,
   3) գործառնական տեսակը,
   4) շահագործողների կողմից իրականացվելիք գործունեության տեսակները,
   5) ազատ տնտեսական գոտու գործունեության ժամկետները,
   6) կազմակերպչին և շահագործողներին ներկայացվող չափանիշները,
   7) ազատ տնտեսական գոտու ստեղծման ներդրումային ծրագիրը,
   8) կազմակերպչի անհատական տվյալները, եթե նախապես հայտնի է կազմակերպիչը,
   9) այլ անհրաժեշտ տվյալներ և պահանջներ:
3. Եթե ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումից հետո մեկ տարվա ընթացքում ազատ տնտեսական գոտու գործունեությունը չի մեկնարկում ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը համարվում է չեղյալ:

Հոդված 6. Ազատ տնտեսական գոտուն ներկայացվող պահանջները

1. Ազատ տնտեսական գոտին պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝
   1) ապահովված լինի բեռնափոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցների, այդ թվում երկաթուղային տրանսպորտային միջոցների ներսբերման հնարավորությամբ, ավտոկայանատեղով և փակուղիով,
   2) սահմանազատված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված սահմանագծին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան սահմանով,
   3) ապահովված լինի մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային հսկողություն և մաքսային ձևակերպումներ իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններով,
   4) ունենա ազատ տնտեսական գոտու ներսում ապրանքների ազատ տեղաշարժման հնարավորություն,
   5) ապահովված լինի անվտանգության, առաջնային բուժօգնության և հակահրդեհային համակարգերով,

6) ունենա անխափան ջրամատակարարում և ջրահեռացում, էներգամատակարարում, գազամատակարարում, աղբահանություն և կապ՝ առնվազն հեռախոս և ինտերնետ,
7) ապահովված լինի սանիտարա-հիգենիկ նորմերի պահանջների պահպանման համապատասխան միջոցներով,
8) ունենա կարանտինային սպասարկման տարածք,
9) ապահովված լինի ապրանքների պահպանության համար նյութատեխնիկական սարքավորումներով, ինչպես նաև բեռնման, բեռնաթափման և տրանսպորտային միջոցների, պահեստային տնտեսության համար անհրաժեշտ սարքավորումներով, կապի և այլ միջոցներով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները կարող են չպահպանվել դրանց իրագործման տեխնիկական անհնարինության հիմնավորման դեպքում:

Հոդված 7. Ազատ տնտեսական գոտու կազմակերպման մասին պայմանագրի կնքումը

1. Հայաստանի Հանրապետության կառավարության անունից լիազոր մարմինը կնքում է համապատասխան պայմանագիր կազմակերպչի հետ:
2. Ազատ տնտեսական գոտու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական ռեժիմը կիրառվում է Հայաստանի Հանրապետության կառավարության անունից լիազոր մարմնի և կազմակերպչի միջև կնքված պայմանագրում նշված ժամկետից, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ ժամկետներ սահմանված չեն:
3. Լիազոր մարմնի և կազմակերպչի միջև կնքվող պայմանագիրը ենթակա է հրապարակման՝ լիազոր մարմնի պաշտոնական կայք էջում:

Հոդված 8. Լիազոր մարմնի լիազորությունները

1. Լիազոր մարմինը՝
   1) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կարող է առաջարկել ազատ տնտեսական գոտու կազմակերպման պայմանագրում կատարել փոփոխություններ կամ լուծել այն,
   2) իրականացնում է հսկողություն ազատ տնտեսական գոտու կազմակերպման պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ,
   3) իրականացնում է ազատ տնտեսական գոտու շահագործողի թուլտվությամբ սահմանված պահանջների համապատասխանության ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում համապատասխան առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն,
   4) պահանջում է կազմակերպչից ազատ տնտեսական գոտու գործունեության վերաբերյալ հաշվետվություններ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած կարգով և ձևով,
   5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ,
   6) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնում է առաջարկ՝ ազատ տնտեսական գոտու շահագործողին տրամադրված թույլատվության դադարեցման վերաբերյալ:

Հոդված 9. Կազմակերպչի պարտավորությունները

1. Կազմակերպչի պարտավորություններն են.
   1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատել, օգտագործել ազատ տնտեսական գոտու ինժեներական կառույցները և ենթակառուցվածքները, ինչպես նաև ապահովել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պահանջները,

2) պայմանագիր կնքել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից թույլտվություն ստացած շահագործողների հետ և իրականացնել պայմանագրի կատարման հսկողություն,
3) սահմանել ազատ տնտեսական գոտու անվտանգության ներքին կանոնների առանձնահատկությունները,
4) ապահովել ազատ տնտեսական գոտուն սույն օրենքով ներկայացվող պահանջների կատարումը,
5) ապահովել ազատ տնտեսական գոտում գործունեություն իրականացնելու համար սույն օրենքի 7-րդ հոդվածին համապատասխան կնքած պայմանագրային պարտավորությունների կատարումը,
6) ազատ տնտեսական գոտու նախորդ տարվա գործունեության վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ լիազոր մարմնին Հայաստանի Հանրապետության կառավարությամբ սահմանված կարգով,
7) իրականացնել միջոցառումներ՝ ուղղված ազատ տնտեսական գոտու միջազգային ճանաչմանը և նրանում շահագործողների ներգրավմանը,
8) սահմանել և հրապարակել ազատ տնտեսական գոտու շահագործման կանոնները և իրականացնել պայմանագրով սահմանված այլ պարտավորություններ:

Հոդված 10. Շահագործողների պարտավորությունները

1. Շահագործողների պարտավորություններն են.
1) ազատ տնտեսական գոտու իրեն հատկացված տարածքը նախապես հաստատված նախագծին համապատասխան կառուցապատումն իրականացնել համաձայնեցնելով կազմակերպչի հետ,
2) պահպանել ազատ տնտեսական գոտում գործունեություն ծավալելու Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ազատ տնտեսական գոտու շահագործման կարգի պահանջները,
3) պահպանել ազատ տնտեսական գոտու անվտանգության կանոնները, թույլտվությամբ սահմանված պահանջները և իրականացնել պայմանագրով սահմանված այլ պարտավորություններ:

Հոդված 11. Ազատ տնտեսական գուտում սահմանափակումները

1. Ազատ տնտեսական գուտում չեն կարող իրականացվել հետևյալ գործունեության տեսակները.
1) ռադիոակտիվ նյութերի արտադրություն և առևտուր,
2) զենքի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի արտադրություն ու առևտուր,
3) առանց Հայաստանի Հանրապետության օրեսդրությամբ սահմանված կարգով տրված թույլտվության թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ներմուծում, պահպանում, արտադրություն և առևտուր,
2. Արգելվում է ֆիզիկական անձանց, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքն ազատ տնտեսական գոտի՝ առանց մաքսային հսկողության:
3. Ֆիզիկական անձանց և տրանսպորտային միջոցների՝ ազատ տնտեսական գոտի մուտք և ելքը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 12. Ազատ տնտեսական գոտու շահագործումը

1. Ազատ տնտեսական գոտու շահագործումն իրականացվում է շահագործողի ու կազմակերպչի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կազմակերպչի կողմից սահմանված շահագործման կարգին համապատասխան:
2. Ազատ տնտեսական գոտում ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված գործունեության տեսակներից բացի այլ

գործունեության տեսակներ կարող են իրականացնել միայն շահագործող չհանդիսացող իրավաբանական անձիք և անհատ ձեռնարկատերերը:

Շահագործող չհանդիսացող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ազատ տնտեսական գոտում իրականացվող գործունեությունը չի համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս իրականացվող գործունեություն:

Հոդված 13. Ազատ տնտեսական գոտում հարկային, մաքսային և արժութային կարգավորումը

1. Ազատ տնտեսական գոտում հարկային և մաքսային փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությամբ, հաշվի առնելով, որ ազատ տնտեսական գոտու շահագործողներին տրվում են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի, մաքսատուրքի վճարման արտոնություններ:
2. Ազատ տնտեսական գոտում իրականացվող գործարքների, ինչպես նաև շահագործողների և քաղաքացիա-իրավական հարաբերությունների այլ սուբյեկտների միջև իրականացվող գործարքների նկատմամբ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվում են առանձնահատկություններ:

Հոդված 14. Ազատ տնտեսական գոտում պետության կողմից ծառայությունների մատուցումը և վերահսկողության իրականացումը

1. Ազատ տնտեսական գոտում պետության կողմից մատուցվող ծառայություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ պարզեցված (մեկ պատուհանի) սկզբունքով:
2. Պետական ծառայություններ մատուցող և վերահսկողություն իրականացնող համապատասխան պետական մարմիններն ազատ տնտեսական գոտու տարածքում կարող են ունենալ ստորաբաժանումներ:

Հոդված 15. Ազատ տնտեսական գոտու լուծարումը

1. Ազատ տնտեսական գոտին կարող է լուծարվել՝
   1) սահմանված ժամկետի լրանալուն պես, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ժամկետը երկարաձգելու մասին որոշում չի կայացվում,
   2) վաղաժամկետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, նախապես փոխհատուցելով լուծարման հետևանքով կազմակերպչի և շահագործողների կողմից կրած վնասները,

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վաղաժամկետ լուծարման գործընթացը կարող է սկսվել դրա մասին որոշում ընդունելուց հետո ոչ շուտ քան մեկ տարի հետո:

Հոդված 16. Ազատ տնտեսական գոտում վեճերի լուծումը

1. Ազատ տնտեսական գոտու գործունեության հետ կապված վեճերի կարգավորումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Շահագործողների միջև վեճերի կարգավորումը կարող է իրականացվել նաև միջազգային արբիտրաժի միջոցով:

Հոդված 17. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

| ԱՄՓՈՓԱԹԵՐԹ | | |
|---|---|---|
| «ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ, ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | |
| Հեղինակ | Առաջարկության և առարկության բովանդակություն | Եզրակացություն |
| ՀՀ կառավարություն | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով տրված է ազատ տնտեսական գոտու կազմակերպչի հասկացությունը, այն է՝ «կազմակերպիչը բացառապես ազատ տնտեսական գոտու կազմակերպման նպատակով ՀՀ կառավարության կողմից ստեղծված կամ ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված իրավաբանական անձ է»: Հասկացությունից պարզ չէ կառավարության կողմից ստեղծված իրավաբանական անձի իրավական կարգավիճակը, իսկ կառավարության կողմից իրավաբանական անձի ընտրության դեպքում սահմանված չեն ընտրության չափանիշները: | Ընդունվել է՝ կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| | Հակառակ դեպքում ներքին հակասություններ են առաջանում ներկայացված Նախագծի եւ «Երեւանի Զվարթնոց օդանավակայանի եւ Երեւան ազատ տնտեսական գոտու տարածքներում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու մասին» 2002թ. հունիսի 1-ի ՀՕ-329 ՀՀ օրենքով ամրագրված դրույթների միջեւ, որը հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2 մասի պահանջներին: Ուստի, առաջարկվում է Նախագիծը քննարկել 2002թ. հունիսի 1-ի ՀՕ-329 վերը հիշատակված օրենքի համատեքստում: | Ընդունվել է՝ փաթեթը լրացվել է նշված օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով: |
| | Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասում նշված է, որ «Շահագործողը թույտվությամբ չսահմանված այլ տեսակի գործունեություն իրականացնելու համար պետք է ստանա թույտվություն»: Նման մոտեցումը իրավական տեսանկյունից հստակ չէ, քանզի շահագործողը նախապես պետք է իրականացնի միայն թուլտվությամբ սահմանված գործունեութուն: | Ընդունվել է մասնակի՝ «պետք է ստանա» բառերից հետո լրացվել է «լրացուցիչ» բառը: |
| | Առաջարկվում է Նախագծի մի շարք հոդվածներում կատարել լեզվաոճաբանական հետեւյալ փոփոխությունները, մասնավորապես՝<br>• Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի «միջոցներ» բառը փոխարինել «միջոցներով» բառով.<br>• Նախագծի 7-րդ հոդվածի վերնագրում «գոտի» բառը փոխարինել «գոտու» բառով .<br>• Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «առաջարկել» բառը փոխարինել «կարող է առաջարկել» բառով, 4-րդ կետի «պահանջել» բառը փոխարինել «պահանջում է» բառով եւ 6-րդ կետի «ներկայացնել» բառը՝ «ներկայացնում է» բառով: Այլ դիտողությունները կարող են ներկայացվել աշխատանքային քննարկման ընթացքում: | Ընդունվել է՝ կատարվել են համապատասխան փոփոխություններ: |
| | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ( այսուհետ՝ Նախագիծ ) վերաբերյալ .<br>Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 11-ին բաժնի «7-րդ» եւ «8-րդ» կետերը ուժը կորցրած ճանաչել: Մինչդեռ, հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ 29.12.2010թ.-ին ընդունված «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ( ՀՕ-227-Ն ) 6-րդ հոդվածով վերը նշված աղյուսակը | Ընդունվել է՝ կատարվել են համապատասխան փոփոխություններ: |

| | | |
|---|---|---|
| | վերախմբագրվել է եւ արդյունքում Նախագծի 11-րդ բաժինը դարձել է 12-րդ բաժին՝ 5 կետերով, հետեւաբար առաջարկվող 7-րդ եւ 8-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել հնարավոր չէ: | |
| | 1.«Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 4-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ գտնում ենք, որ կազմակերպչի ընտրության չափանիշները պետք է սահմանվեն օրենքով:<br>2.Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասում «կետին» բառը փոխարինել «մասին» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների: Նույն դիտողությունը վերաբերում է նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասին:<br>3.«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառից հետո լրացնել «և լրացումներ» բառերը, քանի որ նախագծում նախատեսվում են նաև լրացումներ:<br>4.«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդվածների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ մասնավորապես նախագծում բացակայում է 3-րդ հոդվածը:<br>5.«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտահարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ չունենք: | 1. Ընդունվել է՝ նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ կետը խմբագրվել է:<br>2. Ընդունվել է:<br>3. Ընդունվել է:<br>4. Ընդունվել է: |
| ՀՀ կառավարություն | 1. «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.<br>«Ազատ տնտեսական գոտու շահագործող (այսուհետ շահագործող) – սույն օրենքին համապատասխան բացառապես ազատ տնտեսական գոտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ մասնաճյուղ, ինչպես նաև օտարերկրյա կազմակերպության ներկայացուցչություն, որը ունի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրված համապատասխան թույլտվություն և կազմակերպիչի հետ կնքված համապատասխան պայմանագիր:»:<br>2. Նախագծի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետում «կապ» բառից հետո լրացվել են «՝ առնվազն հեռախոս և ինտերնետ» բառերը:<br>3. Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է «՝ լիազոր մարմնի պաշտոնական կայք էջում:» բառերով:<br>4. Նախագծի 8-րդ հոդվածի 1-րդ մասում.<br>• 1-ին կետում «կարող է առաջարկել» բառերից առաջ լրացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարությանը» բառերը,<br>• 4-րդ մասում «կարգով» բառից հետո լրացվել է «և ձևով» բառերը,<br>• 6-րդ կետում «շահագործողի» բառը փոխարինվել է «շահագործողին տրամադրված» բառերով:<br>5. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «կանոնները» բառից հետո լրացվել են «, թույլտվությամբ սահմանված պահանջները» բառերը:<br>6. Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը վերախմբագրվել է նույն հոդվածի հոդվածի 2-րդ մասի:<br>7. Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի «իրականացվել» բառից հետո լրացվել է «նաև» բառով: | |

| | |
|---|---|
| | 8. Լրացվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:<br>9. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» նախագծում լրացվել է «կամ նրանց կողմից օգտագործվող» բառերը |